

ԲԱՆԱՍԵՐ

ԱՆՏԻՊ ՎԱՎԵՐԱԳՐԵՐ ԼՈՒՍԱՀՈԳԻ ԳԱՐԵԳԻՆ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՀՈՎՍԵՓՅԱՆԻ ԿԵՆՍԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

Հայկական ՍՍՌ Պետական մատենադարանում, ուր կենտրոնացված են Էջմիածնի նախկին Սինոդի, Գեորգյան Հոգևոր ճեմարանի և անհատական մի շարք մանր ու մեծ արխիվներ, պահվում են լուսահոգի Գարեգին Կաթողիկոսի կյանքի և գործունեության հետ կապված մի շարք վավերագրեր։

Հանգուցյալը Սուրբ Էջմիածնի աչքի ընկնող միաբան է հանդիսացել և եկեղեցական ու հասարակական ղեկավար պաշտոններ է վարել։ Իսկ որովհետև նախասովետական շրջանում Էջմիածինը, հայոց եկեղեցական գործերից բացի, իր պարտականությունն էր համարում զբաղվել նաև հասարակական, դաստիարակչական և հայագիտական աշխատանքներով, ուստի և բնական է, Գարեգին Կաթողիկոսի գործունեությանը վերաբերող վավերագրերը նեղ կենսագրական նշանակություն չունեն, այլ արժեքավոր են մեր պատմագիտության համար ընդհանրապես։

Ծանոթանալով Գարեգին Կաթողիկոսի անձնավորությանը և գործունեությանը հետ կապված Մատենադարանի ավելի քան հազար վավերագրերի հետ, պետք է ասենք, որ Հանգուցյալը, անշափ աղնիվ, հայ ժողովրդին և Հայ Եկեղեցուն մինչև վերջ նվիրված, անբասիր, հայրենասեր և էջմիածնասեր հոգևորական է հանդիսացել։ Աչքից անցկացնելով Մատենադարանի վավերագրերը, մենք նրանց մեջ չգտանք ո՛չ մեկը, որը փոքրիկ չափով անգամ ստվեր ձգեր նրա փայլուն կենսագրության վրա։ Ամենայն Հայոց Հայրապետության հրամանով նա տասնյակ պաշտոններ է վարել և բոլոր դեպքում ցուցադրել է մեղվաջան եռանդ և մեծ շնորհք՝ իրեն վստահված գործը պատվով կատարելու համար։

Նպատակ ունենալով օգնել Գարեգին Կաթողիկոսի գիտական կենսագրությունը կազմողներին, անհրաժեշտ ենք համարում Հայկական ՍՍՌ Պետական մատենադարանի մեզ ծանոթ վավերագրերից մի քանիսը հրատարակության հանձնել։

1. ԳԱՐԵԳԻՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՀՈՐ՝ ԿԱՐԱՊԵՏԻ ԴԻՄՈՒՄԸ ԳԵՈՐԳ Դ. ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ՝ ԻՐ ՈՐԴՈՒՆ ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՆՈՐԻՆ ՎԵՀԱՓԱՌՈՒԹԵԱՆ ՏԵԱՌՆ ԼԳԷՈՐԳԱՅ ԶՈՐԲՈՐԴԻ
ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ի բնակչէ Մարաղայ գեղջ Կարապետէ Յովսէփեան Ղարաբաղ վիճակի

ԽՆԴԻՐ

Ծանրաբեռնեալ գոլով խնամատարութեամբ աղքատիկ գերդաստանի իմոյ և չունելով հնարս ինչ կրթել տալոյ զորդիս իմ ըստ հայրական սեպուհ պարտուցս, այսու ամենախոնարհ խնդրանօք դիմեմ առ բարեգութ հայրդ մեր ամե-

նեցուն և հայցեմ հրամայել, զի ընկալցի երեքտասանամեայ որդին իմ Գարեգին Յովսէփեան ի Գէորգեան Ճեմարան Մայր Աթոռոյդ, ի շարս բազմաթիւ հայազգի աշակերտելոց։

Վեհափառութեան Ձերոյ ամենախոնարհ ծառայ՝
ԿԱՐԱՊԵՏ ՅՈՎՍԷՓԵԱՆ

Ի 6 յունիսի
1882 ամի

(Հայկական ՍՍՌ Պետական մատենադարան, Արխիվային բաժին, Գեորգյան ճեմարանի արխիվ, թղթապանակ № 4, վավերագիր № 3, թ. 1ա)։

2. ԳԱՐԵԳԻՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՔԵՌՈՒ՝ ԱՆՏՈՆ ՎԱՐԴԱՊԵՏԻ ԴԻՄՈՒՄԸ ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ՏԵՂԱԿԱԼ ՄԿՐՏԻՉ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ՝ ԳԱՐԵԳԻՆ ՀՈՎՍԵՓՅԱՆԻՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՃԵՄԱՐԱՆՈՒՄ ՈՐՊԵՍ ԳԻՇԵՐՕԹԻԿ ԱՇԱԿԵՐՏ

№ 110

ՆՈՐԻՆ ԲԱՐՁՐ ՍՐԲԱԶՆՈՒԹԵԱՆ Տ. ՏԵՂԱԿԱԼԻ
ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ
ՄԿՐՏՉԻ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ

Ի Ս. Էջմիածնի յԱնտոն վարդապետէ Վարդազարեանց

ԽՆԴԻՐ

Որպէս քաջայայտ է վարչութեան ընդունակութիւն և բարեբարոյութիւն Գարեգին Յովսէփեանց մարաղեցւոյ վիճակին Ղարաբաղու աշակերտի Ճեմարանի՝ որ իբրև երթևեկ ուսանէր ցարդ ընդ հոգատարութեամբ իմով, սակայն այժմ զանյարմարութիւն և զդժուարութիւն սննդեանն նորա ի նկատի ունելով անկարանամ հոգալ։ Ուստի այսու խնդրագրով դիմելով առ Ձերդ Սրբազնութեան շնորհ առնել խնդրեմ վասն յիշեալ չքաւոր աշակերտի, ընդունելով զնա ի շարս ձրիավարժից ըստ կանխաւ խոստման վարչութեան, որով թէ՝ շնորհապարտ կացուցանէք զիս՝ և թէ՝ տայք միջոց յառաջադիմութեան նորա։

Ընդ սմին մատուցանեմ զվկայական ծննդեան և ծաղկի։

Մնամ Ձերդ բարձր Սրբազնութեան
ամենախոնարհ ծառայ և որդեակ՝
ԱՆՏՈՆ ՎԱՐԴԱՊԵՏ ՎԱՐԴԱԶԱՐԵԱՆՑ

Ի 2 սեպտեմբերի
1883 ամի
ի Ս. Էջմիածին

Դրուրյան վրա մակագրվել է.

Յանձնեմ վարչութեան Ճեմարանի Մայր Աթոռոյ՝ զի համաձայն ընդունակութեան մանկտոյն առնել պատշաճական զարժանին տնօրէնութիւն։

Տեղապահ ատենակալի Սինոդի՝
ՄԿՐՏԻՉ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

Ի 3—ն սեպտ. 1883 ամի
ի Ս. Էջմիածին

(Հայկական ՍՍՌ Պետական մատենադարան, Արխիվային բաժին, Գեորգյան ճեմարանի արխիվ, թղթապանակ № 4, վավերագիր № 3, թ. 2ա)։

3. ԳԱՐԵԳԻՆ ՀՈՎՍԵՓՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԸ ՄԱԿԱՐ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ՝ ՍԱՐԿԱՎԱԳԱԿԱՆ ԿՈՉՈՒՄ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՆՈՐԻՆ Ս. ՕԾՈՒԹԵԱՆ
ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻՆ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ
Տ. Տ. ՄԱԿԱՐԱՅ Ա.

Հոգևոր Տէր.

Ի մանուկ տիոց սնեալ և զարգացեալ ընդ հովանեաւ Աստուածահիմն Առաքելական Աթոռոյս Սրբոյ Էջմիածնի և այժմ հասեալ ի չափ հասունութեան՝ ճանաչելով զպարտիս առ սնուցիչ մայրս մեր տեսանեմ պայծառապէս զկէտ նպատակի կենացս յեկեղեցական կոչման, ուստի այժմ փութացեալ վաղագույն ևս հասանիլ այնմ կոչման, որ է սրբազոյն նպատակ կենաց իմոց, վստահացեալ ի սէր և ի գթառատութիւնդ հայրական, աղաչեմ զՁերդ Վեհափառութիւն ընդունել զիս ի շարս միաբանից Սրբոյ և Մեծի Առաքելական Աթոռոյդ։

Ամենախոնարհ ծառայ և որդի
Ուսանող Գ. Լսարանի Ճեմարանի
Մայր Աթոռոյ Սրբոյ Էջմիածնի՝
ԳԱՐԵԳԻՆ ՅՈՎՍԷՓԵԱՆՑ

Ի 14—ն յունիսի 1889 ամի
ի Ս. Էջմիածին

(Հայկական ՍՍՌ Պետական մատենադարան, Արխիվային բաժին, Գեորգյան ճեմարանի արխիվ, թղթապանակ № 4, վավերագիր № 1)։

4. ԳԱՐԵԳԻՆ ՍԱՐԿԱՎԱԳԻ՝ ԳԵՈՐԳՅԱՆ ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆԻՑ ՍՏԱՑԱԾ ՄՐՑԱԳԻՐԸ

ՄՐՑԱԳԻՐ

Ուսումնական Խորհուրդ Հոգևոր Ճեմարանի Հայոց Մայր Աթոռոյ Ս. Էջմիածնի վկայէ, զի Յովսէփեան Գարեգին սարկաւագ ծնեալ ի 18 դեկտ. 1867 թեմին Ղարաբաղու, յամի 1890 աւարտեալ զընթացս ուսմանց ի Հոգևոր դպրոցի Ճեմարանիս, աշակերտեցաւ մասնագիտական բաժնի նորին յամին 1887 և յոյժ գովելի վարուք կատարեալ զընթացս ուսմանց երից ամաց, եցոյց ի վերջին հարցաքննութեան յամսեանն մայիսի 1890 ամի յառաջադիմութիւն այսպիսի.

Բնական Աստուածաբանութիւն	յոյժ գովելի
Տեսական Աստուածաբանութիւն	
Բարոյական Աստուածաբանութիւն	
Քննաբանութիւն Ս. Գրոց	յոյժ գովելի
Մեկնաբանութիւն Ս. Գրոց	
Բացատրութիւն Ս. Գրոց	յոյժ գովելի
Սրբազան բեմբասացութիւն	գովելի
Եկեղեցական մատենագրութիւն	յոյժ գովելի
Եկեղեցական պատմութիւն	յոյժ գովելի
Տրամաբանութիւն	գովելի
Հոգեբանութիւն	յոյժ գովելի
Բարոյական իմաստասիրութիւն	յոյժ գովելի
Մանկավարժութիւն	գովելի
Գիտութիւն դասաւանդութեանց	յոյժ գովելի
Մատենագրութիւն Հայոց	յոյժ գովելի
Մատենագրութիւն Ռուսաց	յոյժ գովելի
Ընդհանուր մատենագրութիւն	յոյժ գովելի
Ֆրանսերեն լեզու	գովելի

Այլ և ճննեալ զշարադրութիւնն, զոր մատոյց նա ըստ նշանակեալ բնաբանի, Ուսումնական Խորհուրդս ի ԺԶ (16) գումարման իւրում ի 26 մայիսի 1890 ամի սահմանեաց ճանաչել զԳարեգինն Յովսէփեան արժանի այսմ մըրցագրի՝ դրոշմելոյ կնքով Ճեմարանիս ի 18 ապրիլի 1892 ամի, ի Ս. Էջմիածին:

Տեսուչ Հ. Ճեմարանի **Քարտուղար Խորհրդոյ**

(Կից տրված են նույնի ռուսերեն և ֆրանսերեն թարգմանությունները)։

(Հայկական ՍՍՌ Պետական մատենադարան, Արխիվային բաժին, Գևորգյան ճեմարանի արխիվ, Թղթապանակ № 4, վավերագիր № 3, թ. 11բ)։

5. ԿՈՎԿԱՍԻ ՀԱՅՈՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԳԱՐԵԳԻՆ ՍԱՐԿԱՎԱԳԻՆ՝ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՒՂԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԽՈՐՀՈՒՐԴ
ՀԱՅՈՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ
ԿՈՎԿԱՍՈՒՄ

26 ապրիլ 1892 թ.
№ 48
ԹԻՖԼԻՍ

Բարեկրոն Սարկավագ Գարեգին Հովսեփյանին.

Խորհուրդը քննելով Եվրոպա բարձրագույն ուսման ուղարկելու համար խնդրամատույց եղած ճեմարանավարտների խնդիրները՝ Ձեզ ընտրեց, բարեկրոն Սարկավագ, ընկերությանս որդեգիր, գերակշռություն տալով այն կոչմանը, որի մեջ գտնվում եք։

Ձեր ուսման ընթացքը պիտի տևե 3—4 տարի, ուսանելի գիտությունը պիտի լինի Աստվածաբանություն։ Մյուս պայմանների մասին հարկավորը կհաղորդվի Ձեզ, երբ Դուք Տփխիսում ներկայանաք Խորհրդին։ Փութացեք գալ և գնալ արտասահման, որպեսզի ժամանակը բավե Ձեզ նախապատրաստության համար մինչև առաջիկա ուսումնական տարու սկսելը։

Նախագահ Խորհրդի
(Ստորագրություն)

(Հայկական ՍՍՌ Պետական մատենադարան, Արխիվային բաժին, Գարեգին Հովսեփյանի արխիվ, Թղթապանակ № 95, վավերագիր № 14)։

6. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԻՎԱՆԱՏԱՆ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԳԱՐԵԳԻՆ ՍԱՐԿԱՎԱԳԻՆ՝ ՈՒՍՄԱՆ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԴԻՒԱՆ
ՎԵՀԱՓԱՌ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ըստ կառավարչական մասին
Թ. 1055
27 յուլիս 1896 ամի
Ի Ս. ԷՋՄԻԱԾԻՆ

Վարչութեան Հոգևոր Ճեմարանի Մայր Աթոռոյ.

Գարեգին սարկաւագն խնդրագրով յանուն Վեհափառ Հայրապետի աղգիս ի 10 ամսոյս հայցէ զբարեհաճ տնօրէնութիւն Նորին Ս. Օծութեան՝ յաղագս մնալոյ յարտասահմանի ամ մի ևս՝ առ ի կատարելագործել յաստուածաբանական գիտելիս և աւարտել զշարադրութիւն իւր։

Առ այս Նորին Սրբութիւնն բարեհաճեցաւ հրամայել Դիւանիս յայտնել Գարեգին սարկաւագի եթէ նա կարէ մնալ անդ առ ի յաւարտել զշարադրութիւն իւր, սակայն պարտ է դառնալ այսր ոչ անադան քան զ15 հոկտեմբերի տարւոյս։

Յայտնելով զայսմանէ վարչութեանդ, դիւանս յարգանօք խնդրէ փութալ հոգալ զարժանն, որպէս զի սարկաւագն առանց իրիք դժուարութեանց կարիցէ ի կատար ածել զբարձր հրաման Նորին Վեհափառութեան։

Դիւանապետ՝
ՆԱՀԱՊԵՏ ՎԱՐԴԱՊԵՏ

(Հայկական ՍՍՌ Պետական մատենադարան, Արխիվային բաժին, Գեորգյան Ճեմարանի արխիվ, թղթապանակ № 4, վավերագիր №—3, թ. 10ա)։

7. ԽՐԻՄՅԱՆ ՀԱՅՐԻԿԻ ԽՐԱԽՈՒՄԻՉ ԵՐԿՏՈՂԸ ԳԱՐԵԳԻՆ ՎԱՐԴԱՊԵՏԻՆ՝ ՉՀՈՒՋՎԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԲԵՐՈՒԹՅԱՄԲ ՏԱՆԵԼՈՒ ԻՐ ՍՏԱՆՁՆԱԾ ՊԱՇՏՈՆԸ՝ ԽՈՍՏԱՆԱԼՈՎ, ԱՌԱՋԻԿԱՅՈՒՄ ԲԱՐՎՈՔԵԼ ՆՐԱ ՎԻՃԱԿԸ

ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Շնորհազարդ Տեր Գարեգին վարդապետ.

Վաղուց է որ Ձեզմէ նամակ և տեղեկություն չեմ ստանար։ Լսեցի, որ Ձեր սովորական հուզման հիվանդություն կրկնված է, և Դուք պարտավորված դնացել եք Թայրիրյան կուսի ամառանոց։ Ես Ձեզ բերանով պատվեր տվի և դարձյալ նույն կրկնում եմ, գիտենալով որ Ձեր պաշտոն ծանր է և Ձեր ուժը համապատասխան չէ պաշտոնապես և ֆիզիկապես, սորա պատվեր տվի Ձեզ ոգիդ հանդարտ պահել, չխռովել, չհուզվել, համբերությամբ, երկայնմտությամբ գործել։ Մի՛ սրտնեղիք, ամենայն կերպով կաշխատիմ ազատել զՁեզ այդ նեղ և դժվարատար դրութենեն։

Ապրիլ 8

Ողորակից Ձեզ՝
ՀԱՅՐԻԿ

(Հայկական ՍՍՌ Պետական մատենադարան, Արխիվային բաժին, Գարեգին Հովսեփյանի արխիվ, թղթապանակ № 95, վավերագիր № 8)։

8. ՏԵՂԵԿԱՆՔ՝ ԳԱՐԵԳԻՆ ՎԱՐԴԱՊԵՏ ՀՈՎՍԵՓՅԱՆԻ ՄՈՍԿՎԱՅԻ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՎԿԱՍՅԱՆ ԲԱԺԱՆՄՈՒՆՔԻ ԻՍԿԱԿԱՆ ԱՆԴԱՄ ԸՆՏՐՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

(Թարգմանություն ռուսերենից)

Մոսկվայի Կայսերական հնագիտական ընկերության Կովկասի բաժանմունքը իր 1902 թվականի մարտի 24-ի նիստում, կանոնադրության 4-րդ հոդվածով, Գարեգին վարդապետ Հովսեփյանին ընտրեց բաժանմունքի իսկական անդամ։

Նախագահ՝ (ստորագրություն) Քարտուղար՝ (ստորագրություն)

Թբիլիսի, 30 ապրիլի 1903 թ.

(Հայկական ՍՍՌ Պետական մատենադարան, Արխիվային բաժին, Գարեգին Հովսեփյանի արխիվ, թղթապանակ № 95, վավերագիր № 52)։

9. ՄԱՏԹԵՈՍ Բ. ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿՈՆԴԱԿԸ՝ ԳԱՐԵԳԻՆ ՎԱՐԴԱՊԵՏ ՀՈՎՍԵՓՅԱՆԻՆ ԴԻՎԱՆԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄ ԿԱՐԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՄԱՏԹԷՈՍ Բ.
ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՒ
ԿԱԹՈՒՂԻԿՈՍ ՍՄԵՆԱՅՆ
ՀԱՅՈՑ
ՌՅՄԹ 1909

ՄԱՏԹԷՈՍ ԾԱՌԱՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ ԵՒ ԱՆՀԱՍԱՆԵԼԻ ԿԱՄՕՔՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՒ ԿԱԹՈՒՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ, ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՄԱԶԳԱԿԱՆ ՆԱԽԱՄԵԾԱՐ ԱԹՈՌՈՅ ԱՐԱՐԱՏԵԱՆ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՍՐԲՈՅ ԿԱԹՈՒՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ

Բարձրապատիւ Տ. Գարեգին վարդապետի Յովսէփեան հարազատ որդւոյ
Մայր Աթոռոյս ողջոյն և հայրապետական օրհնութիւն

Համբարձեալ Մեր ի գահ հայրապետական, կամ եղև Մեզ կալմել Դիւանական Խորհուրդ ի ձեռնհաս միաբանից Մայր Աթոռոյս, զի մի՛ դանդաղեսցին ընթացք ամենայն գործոց և ազգի ազգի բազմաթիւ թղթոց, որք յանուն Մեր, այլ խորհրդակցութեամբ և համերաշխ ջանիւք անդամոց Խորհրդոյ անյապաղ և կանոնաւոր յառաջ վարեսցին այնոքիկ ըստ կանոնաց հրահանգաց, տուելոց ի մէջ, ընդ պատասխանատուութեամբ Ձերով։

Արդ՝ գիտելով Մեր զձեռնհասութիւն Ձեր յայսմիկ, այսու վստահակաւ Մերով վարդեմք զբարձրապատուութիւն Ձեր անդամ Խորհրդոյ Դիւանի Մերոյ, յուսալով, զի Դուք փորձառութեամբ և հմտութեամբ Ձերով դուն գործեսջիք համերաշխ ոգւով և արտեռանդն ջանիւք յառաջ վարել ի միասին ընդ միւս անդամս Խորհրդոյդ և ընդ Դիւանապետին զամենայն գործ և զթղթիսն յօգուտ բարգաւաքման ազգիս, յուրախութիւն և ի մխիթարութիւն Մեր և Ձեր խղճի։

Ողջ լերուք, զօրացեալ ի Տէր և օրհնեալ ի Մէնջ։ Ամէն։

ՄԱՏԹԷՈՍ Բ.
ԿԱԹՈՒՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

24 սեպտեմբերի 1909 ամի
և ըստ տոմարիս ՌՅՄԹ,
ի Հայրապետութեան Մերում Ա. ամի,
յԱրարատեան Մայր Աթոռ
Ս. Էջմիածնի
Թ. 4

(Հայկական ՍՍՌ Պետական մատենադարան, Արխիվային բաժին, Գարեգին Հովսեփյանի արխիվ, թղթապանակ № 95, վավերագիր № 232)։

10. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԻՎԱՆԻ ԳԱՐԵԳԻՆ ՎԱՐԴԱՊԵՏԻՆ ԴՈՀՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՏՆՈՂ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ՝ ՍԱՐԴԱՐԱԲԱԴԻ ԳԵՋՐԼՈՒ ԳՅՈՒՂԻ ԴԱՎԱՆԱՓՈԽ ՀԱՅԵՐԻՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑՈՒ ԳԻՐԿԸ ՎԵՐԱԴԱՐՁՆԵԼՈՒ ԱՌԹԻՎ

ԳԻՒՆ
ՎԵՇԱՓԱՌ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ
Թ. 375
19 փետրուարի 1910 ամի

Ի Ս. ԷՋՄԻԱԾԻՆ

Մայր Աթոռի միաբան բարձրապատիվ Տ. Գարեգին վարդապետ Հովսեփյանին.

Ազգիս Վեհափառ Հայրապետն ստանալով Ձեր բարձրապատվության ամսույս 17-ի զեկուցումը՝ Սարդարաբադի շրջանի Գեջրլու գյուղի դավանափոխ եղող հայերին Մայրենի Եկեղեցու գիրկը դառնալու մասին շնորհիվ Ձեր քարոզների և ջանքերի, բարեհաճեց յուր ձեռքով Ձեր հայտարարության ճակատին մակագրել «Գոհունակության արժանի»։

Դիվանս Նորին Սրբության այս գոհունակության մասին հայտնում է Ձեր բարձրապատվության ի գիտություն և ի խրախույս Ձեր քրտնաջան աշխատության։

Ի տեղի դիվանապետի՝
ՄԱՏԹԵՈՍ ՎԱՐԴԱՊԵՏ

(Հայկական ՍՍՌ Պետական մատենադարան, Արխիվային բաժին, Գարեգին Հովսեփյանի արխիվ, թղթապանակ № 95, վավերագիր № 277)։

11. ԳԱՐԵԳԻՆ ՎԱՐԴԱՊԵՏԻ ՆԱՄԱԿԸ ԻՐ ԿԱՐԳԱԿԻՑ ԸՆԿԵՐՈՋԸ՝ ԳԵՈՐԳ ՍԱՐԿԱՎԱԳԻՆ (ՆԵՐԿԱՅԻՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ)

Սիրելի Գեորգ սարկավագ.

Քո սիրալիր ուշադրության միանգամայն անարժան եմ ես իմ անփութությամբ և դանդաղկոտությամբ։ Շատ ավելի առաջ պետք է շնորհակալական նամակ գրեի քեզ և Քելլե-Շահինյան հորը, բայց այնքան ուշացրի, որ շնորհակալության փոխարեն նոր բեռ եմ դնում և նեղություն տալիս։

Խնդիրն այս է, որ տառերի գյուտի հազարհինգհարյուրամյակի առթիվ հրատարակելիք ժողովածուի մեջ ինձ բաժին է ընկել հայ գրի զարգացման համառոտ պատմությունը տալ հարյուրի չափ օրինակներով։ Ես հավաքել եմ 120-ից ավելի լուսանկարչական պատկերներ հայ գրի հնագույն օրինակներից սկսած մինչև ԺԷ դարը, բայց և այնպես ի նկատի ունիմ Նոր-Նախիջևանի Լուսավորիչ եկեղեցու ձեռագրերից մի երկու նմուշ.

ա) № 2 արծաթապատ ավետարանը, որի մեջն է Լևոն գահաժառանգի պատկերը, 364ա, հիշատակարանի շարունակությունը, սկսում է երեսը՝ «զբարեպաշտ թագաւորն Հեթում որդւովք իւրովք» և այլն։ Այդ մասին մեջ հիշատակարանի գիրը, թանաքը փոխված է, կարծում եմ, որ գրիչը հենց Լևոն թագաժառանգն է, առաջին դեմքով է գրված Լևոնի բերանից։ Ուստի կկնդրեի լուսանկարել տաս մոտավորապես բնագրի մեծությամբ ամբողջ երեսը։

բ) Եկեղեցիներից մեկում, անունը չեմ հիշում, գտնվում է Սմբատ Գունդստապլի ավետարանը, որի մեջ մի քանի տեղ ինքն յուր ձեռքով հիշատակարան ունի յուր անվան ստորագրությամբ։ Կկնդրեմ դարձյալ նորա գրած հիշատակարանից մեկը, մոտաւորապես իսկականի մեծությամբ, դարձյալ լուսանկարվեր։

գ) Լուսավորչի ձեռագիրների մեջ, որը պ. Շահազիզը յուր գրքի մեջ (եր. 96) Վարդանգիրք կամ հավաքածու է անվանում, կա Եղնիկ Կողբացու, Հոհան Մանդակունու, Գրիգոր Նարեկացու, Ներսես Շնորհալու պատկերները։ Դրանց լուսանկարներն էլ կխնդրեմ, որովհետև մտադիր եմ մի դասախոսություն կարդալ «Գրչության արվեստը Հայոց մեջ» վերնագրով, լավ կլիներ այդ «թարգմանիչների» պատկերներն էլ ցույց տալ։

Պ. Շահազիզը զբաղվել է ձեռագիրներով, նորա աջակցությունն եմ խնդրում։ Գուցե աշխատանքի բաժանմամբ հանձնարարությանս ծանրությունը մասամբ կթեթևանա։

Հայր Մկրտչի աջակցությունը նույնպես կխնդրեմ, նորան երեք ռուբլի էի հանձնել հենց այդ նպատակով, բայց այդ քիչ կլինի, պակասը հոգա և գրիր ինձ, պակասը լրացնեմ։ Մերունի հայր Զարիֆյանին իմ հարգանքս և ողջույնս հայտնիր, և խնդրիր, որ իրենից կախված դյուրությունը տա ձեռագիրներից խնդրածս նկարները վերցնելու ժամանակ։

դ) Մոռացա հիշել արծաթապատ մի այլ ավետարան Լուսավորչում, ներսից № 14 նշանակած։ Դորա մեջ մի ընդարձակ պատմական հիշատակարան կա Լևոն արքայի թղթագիր Վասլի ձեռքով գրված (տես և պ. Շահազիզի գիրքը 115—118 երես)։ Կուզեի ունենալ այն հատվածի պատկերը, ուր հիշված է թղթագիր Վասլի անունը, որպեսզի արքայական դիվանի մասին խոսելիս այդ պատկերն էլ մեջը դնեմ։

Խնդիրներս վերջացան, բայց տեսնում եմ ահագին բան դուրս եկավ։ Եթե պ. Շահազիզը ժամանակ գտնե քեզ օգնելիս, հուսով եմ դժվարությունը մասամբ կհեշտանա։ Ժամանակդ շներած դեպքում գրիր ինձ, որ չսպասեմ։

Վաղը գնում եմ Թիֆլիս կլիշեներ պատրաստել տալու, մի շաբաթից դարձյալ տանն եմ։

Շատ ողջույններով fn՝
ԳԱՐԵԳԻՆ ՎԱՐԴԱՊԵՏ

27 մարտի 1913 թ.
Ս. Էջմիածին

Հ. Գ. Թարգմանիչների պատկերները այնքան կարևոր չեն, եթե ա, բ և դ նշանակված երեք լուսանկարը հասցնես, շատ գոհ կմնամ։ Կարապետ եպիսկոպոսի հայրը վախճանվել է, գնացել է ցղնա հորը թաղելու։

(Հայկական ՍՍՌ Պետական մատենադարան, Արխիվային բաժին, Գարեգին Հովսեփյանի արխիվ, թղթապանակ № 95, վավերագիր № 385)։

---

12. ՄԱՂԱԹԻԱ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՕՐՄԱՆՅԱՆԻ ՆԱՄԱԿԸ ԳԱՐԵԳԻՆ ՎԱՐԴԱՊԵՏ ՀՈՎՍԵՓՅԱՆԻՆ՝ ԻՐ ՄՈՏ՝ ԵՐՈՒՍԱՂԵՄ ՀՐԱՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ա Թ Ո Ռ
Ա Ռ Ա Ք Ե Լ Ա Կ Ա Ն
ՍՐԲՈՑ ՅԱԿՈՎԲԵԱՆՑ
Ե Ր Ո Ւ Ս Ա Ղ Է Մ

18 յուլիսի 1914 ամի
Համար 59

Հոգեշնորհ Տ. Գարեգին վարդ. Հովսեփյան.

Սիրելիդ իմ.

Կոստանդնուպոլիս հասնելիդ, մերոնց այցելելիդ, և դեպի Սեբաստիա ուղևորելիդ, և այնտեղ գրելու խոստումիդ, տունեն գրեցին, և կհետևցնեմ թե կանոնավորապես ստացած եք 3/16 և 15/28 թվականներով Վիեննա հղած նամակներս։ Հաջողություն կմաղթեմ բանասիրական արշավանքիդ։

Այստեղ շատ կրկնված լսեցի Ձեր մտադրությունը միջոց ժամանակի մը Երուսաղեմ անցնելու և գրչագիրներու ճոխ մատենադարանով զբաղելու։ Եվ Ձեր այս փափագը կհորդորե զիս լրջորեն հրավիրելու Ձեզ, որ այս մտադրությունդիդ շուշացնեք։ Լսած եք արդեն, որ Մոսկվացի պր. Հ. Ժամհարյան գումար մը նվիրած է վանքին, անոր շահով Ժառանգավորաց վարժարանին ընծացքը ընդարձակելու, և եկեղեցականության ուսումներ ավելցնելու։ Այդ հրկտակը տակավին գործադրված չէ, զի շրջանավարտներ վանքին մեջ տիրող շփոթութենե խրտչելով, եկեղեցականութենե խուսափած և հեռացած են։ Այս տարի հատուկ միտք դրի այդ կետին, և շրջանավարտները կպահեմ, բայց խնդիր է բարձրագույն ուսմանց համար ուսուցիչ հոգալ։

Եթե հաճիք մեզի հրամմել գալ, թե՛ Մատենադարանն և Գանձարանը առատ նյութ կմատակարարեն, նոր գիրք մը պատրաստելու շափ, և թե՛ մեր բարձրագույն դասարաններուն ուսուցիչը կճարվի, անշուշտ ո՛չ առանց պատշաճ փոխարինության։

Թախանձելով կպասեմ հաջող պատասխանի մը, Սեբաստիայե Երուսաղեմ ցամաքի ճանապարհը կրնա նորանոր նյութեր ընծայել Ձեր հետազոտության։

Ես ամենայն փութաջանությամբ վանքին բարեկարգության կհետևիմ, թեպետ Կոստանդնուպոլիս բարեկարգության անհոգ, վանքին դրամական կարողության տիրանալու կհետևի։ Կհուսամ թե ողջմտությունը կհաղթանակե։

Այստեղ շատ մեծ և զերադրապես բարձր է Ձեր անձին հանդեպ համակրանքը և հարգանքը, և վստահ կրնաք ըլլալ սիրալիր և հարգալիր ընդունելության։

Ակնկալությամբ կսպասեմ պատասխանիդ և հնօրյա սիրույս կրկնությամբ մնամ սիրելվույդ,

ՄԱՂԱՔԻԱ ՕՐՄԱՆՅԱՆ

(Հայկական ՍՍՌ Պետական մատենադարան, Արխիվային բաժին, Գարեգին Հովսեփյանի արխիվ, թղթապանակ № 95, վավերագիր № 417)։

---

13. ԳԵՈՐԳ Ե. ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿՈՆԴԱԿԸ ԳԱՐԵԳԻՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՀՈՎՍԵՓՅԱՆԻՆ՝ ԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ ՊԱՆԱԿԵ ԿՐԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Գ Է Ո Ր Գ Ե.
ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՒ
ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ
Ռ·ՑԿԱ. 1912

ԳԷՈՐԳ ԾԱՌԱՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ ԵՒ ԱՆՀԱՍԱՆԵԼԻ ԿԱՄՕՔՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ, ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՄԱԶԳԱԿԱՆ ՆԱԽԱՄԵԾԱՐ ԱԹՈՌՈՅ ԱՐԱՐԱՏԵԱՆ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՍՐԲՈՅ ԿԱԹՈՒՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ

Գերապատիւ Տ. Գարեգին եռոռապակ եպիսկոպոսի, հարազատի Մայր Աթոռոյս ողջոյն և օրհնութիւն հայրապետական

Ի մտանելն Քո ի նոր ապարէզ եպիսկոպոսական ծառայութեան Առաքելական Ս. Եկեղեցւոյ Մերոյ և ազգիս Հայոց՝ ի խրախոյս ապագայ գործունէութեանդ, Մեք տուին Հայրապետական կոնդակաւ արժան համարեմք շնորհել Քեզ զպանակէ եպիսկոպոսական կրել ի կուրծսդ իբրև զնշան մշտայուշ յորդորական, եթէ գլխաւոր պարտիք Քո են ըստ եպիսկոպոսական կոչ-

մանդ զօրհանապազ և անդադար ուսուցանել և հրահանգել պժողովրդն, քաջարթուն տեսուչ հոգւոց և մտաց հօտին Քրիստոսի հանդիսացեալ:

Ողջ լերուք, զօրացեալ ի խնամս Ս. Հոգւոյն և օրհնեալ ի Մէնջ. ամէն:

ԳԷՈՐԳ Ե.

ԿԱԹՈՒՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

...Ապրիլի 1917 ամի
և ըստ տոմարիս ՌՅԿԶ,
ի Հայրապետութեան մերում Զ. ամի,
յԱրարատեան Մայր Աթոռ Ս. Էջմիածնի,
ի Վաղարշապատ:
Թ. 613

(Հայկական ՍՍՌ Պետական մատենադարան, Արխիվային բաժին, Գարեգին Հովսեփյանի արխիվ, Թղթապանակ № 95, վավերագիր № 631):

14. ԳԵՈՐԳ Ե. ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿՈՆԴԱԿԸ՝ ԳԱՐԵԳԻՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՀՈՎՍԵՓՅԱՆԻՆ ԱՐՔՈՒԹՅԱՆ ՊԱՏԻՎ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԳԷՈՐԳ Ե.
ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ
ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ
ՌՅԿԱ. 1912

ԳԷՈՐԳ ԾԱՌԱՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ ԵՒ ԱՆՀԱՍԱՆԵԼԻ ԿԱՄՕՔՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ, ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՄԱԶԳԱԿԱՆ ՆԱԽԱՄԵԾԱՐ ԱԹՈՌՈՅ ԱՐԱՐԱՏԵԱՆ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑՒՈՅ ՍՐԲՈՅ ԿԱԹՈՒՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ

Գերապատիւ Տ. Գարեգին եպիսկոպոսի, ճարազատի Մայր Աթոռոյս ողջոյն և օրհնութիւն

Ի հաւաստիս գոհունակութեան Մերոյ առ հաւատարիմ սպասաւոր բանին կենաց, որ արդիւնաւոր հանդիսացեալ կաս յասպարիզի կոչման դ, աւետարանելով զբանն կենաց ուղիղ վարդապետութեան յունկն հաւատացելոց և հեռուելով լուսաւոր շաւղի երանաշնորհ հարց վարդապետաց առաջնոց, գրաւէր ջանիւք պարապելով ի գիրս և դպրութիւնս, Մեք սովին կոնդակաւս շնորհեմք Ձեզ պատիւ արքութեան, մաղթելով առ Աստուած, շնորհել Ձեզ կար և զօրութիւն, առ ի յարատևել անսայթաք յայդ ուղի լուսատու:

Ողջ լեր և օրհնեալ յերկնաւոր Հօրէն, ամէն:

Վշտալի ԳԷՈՐԳ Ե.

ԿԱԹՈՒՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

յ17 նոյեմբերի 1925 ամի,
ըստ տոմարիս ՌՅՀԵ,
ի Հայրապետութեան Մերոյ ԺԴ. ամի,
յԱրարատեան Մայր Աթոռ
Ս. Էջմիածնի,
ի Վաղարշապատ:
Թ. 709

Կնքեմ
Հերթապահ անդամ
Գերագոյն Հոգևոր խորհրդոյ՝
ԽՈՐԷՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

(Հայկական ՍՍՌ Պետական մատենադարան, Արխիվային բաժին, Գարեգին Հովսեփյանի արխիվ, Թղթապանակ № 96, վավերագիր № 1007):

15. ԱԿԱԴԵՄԻԿՈՍ ԹԱՄԱՆՅԱՆԻ ԳԱՐԵԳԻՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՀՈՎՍԵՓՅԱՆԻՆ ՏՎԱԾ ՄԱՆԴԱՏԸ՝ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀԽՍՀ
ԼՈՒՍԺՈՂԿՈՄԱՏ

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՇՊԱՆՈՒԹՅԱՆ
ԿՈՄԻՏԵ

№ 1102
25/VII 1929 թ
ԵՐԵՎԱՆ

ՄԱՆԴԱՏ

Հնությունների պահպանության կոմիտեի գիտությամբ և թույլտվությամբ Տ. Գարեգին արքեպիսկոպոսը ս. թ. օգոստոս և սեպտեմբեր ամիսների ընթացքում Արագածի, Լոռու և Դիլիջանի շրջաններում կատարելու է հնագիտական ուսումնասիրություններ՝ հուշարձանների լուսանկարում, նկարագրություն, արձանագրությունների ընթերցում։

Հնությունների պահպանության կոմիտեն խնդրում է Խորհրդային բոլոր հաստատություններին՝ ցույց տալ Գարեգին արքեպիսկոպոսին անհրաժեշտ աջակցություն նրա գիտական աշխատանքների միջոցին։

Նախագահ՝
Ա. ԹԱՄԱՆՅԱՆ

ԿՆԻՔ

(Հայկական ՍՍՌ Պետական մատենադարան, Արխիվային բաժին, Գարեգին Հովսեփյանի արխիվ, թղթապանակ № 96, վավերագիր № 1220)։